



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020 թ.

ՎԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հասցեն՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Ի պատասխան Ձեր 14.09.2020թ.-ի գրության

Հարգելի պարոն Սաքունց

Ձեզ ենք տրամադրում 2015 թվականից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 14-ը ընկած ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակիցներին վճարված պարգևատրումների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ տարիների և տնտեսագիտական հոդվածների(գումարների մեջ ներառված են պարգևատրումներից օրենքով սահմանված կարգով կատարվող պահումները՝ եկամտահարկ, սոց. վճար և այլն):

2015 թվական

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 35039.7 հազ. դրամ: Տրվում է միայն քաղաքացիական ծառայողներին՝ ըստ կիսամյակային կատարողականների, աշխատակիցների թիվը՝ 125:

բ/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված գումարների տնտեսված միջոցներից՝ 15456.9 հազ. դրամ: Տրվում է հիմնականում բոլոր աշխատակիցներին, պարգևատրվածների թիվը՝ 159:

2016 թվական

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 39745.2 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 126:

բ/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված գումարների տնտեսված միջոցներից՝ 10015.5 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 128:

2017 թվական

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 40146.4 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 124:

բ/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված գումարների տնտեսված միջոցներից՝ 12029.1 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 132:

2018 թվական

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 40300.5 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 124:

բ/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված գումարների տնտեսված միջոցներից՝ 9241.3 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 148:

2019 թվական

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 36890.7 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 110:

բ/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված գումարների տնտեսված միջոցներից՝ 16954.0 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 132:

գ/«Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված գումարներից՝ 93190.5 հազ. դրամ: Տրվում է հիմնականում աշխատակիցներին ամսական կտրվածքով, պարգևատրվածների թիվը ամեն ամիս տարբեր է, միջին թիվը կազմում է 135 աշխատակից:

2020 թվական (առ 14.09.2020թ.)

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 37092.3 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 105:

բ/ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված գումարների տնտեսված միջոցներից՝ 3280.0 հազ. դրամ, պարգևատրված աշխատակիցների թիվը՝ 13:

գ/«Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված գումարներից՝ 52678.0 հազ. դրամ: Տրվում է ամսական կտրվածքով, պարգևատրվածների միջին թիվը՝ 135:

Միաժամանակ տեղեկացնում են, որ աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, որոնց մեջ մտնում են նաև պարգևատրման գումարները, աշխատողների անձնական տվյալներ են և առանց նրանց գրավոր համաձայնության ենթակա չեն տրամադրման այլ անձանց(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 134): 2019 թվականից մարզպետի պարգևատրումներն իրականացվում են գաղտնի ընթացակարգով և ենթակա չեն հրապարակման: Մարզպետը ներկայացնում է գույքի և եկամուտների տարեկան

հայտարարագիր, ուստի վճարված պարգևատրման չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ ներկայացվող հայտարարագրից:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

17/09/2020

X



ԳԱՅԱԼԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Գ. ՄԱՐԿՈՍՅԱՆ